ղած նպատակը, որի հետ մեր պատվիրակությունները հաստատելու են Ալեքսանդրապոլում, զինադադարի նոր պայմաններ չի պահանջում։ Մենք սպասում ենք կոնֆերանսի բացման թվականի մասին ձեր պատասխանին։

Արտաքին գործոց նախարար՝ Հ. Օհանջանեան

Նոյն օրը Քեազիմ Կարաբեքիր փաշային ստացանք հետևեալ գրությունը.

10 նոյեմբ. 1920 թ.

Հաշտության բանակցություններ սկսելու համար իմ կառավարության առաջարկած զինադադարի պայմանները և Ալեքսանդրապոլում գտնվող հայկական զորքերի հրամանատարի արիւն թափելու համար արած դիմումին ի փոխարէն առաջարկած պայմանները Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը միմեանց հետ չպիտի չփոթէ։ Իմ բանակը Ալեքսանդրապոլի վրա յարձակվելու պատրաստ մի վիճակի մէջ էր, երբ ձեր կառավարության հաշտություն խնդրելու և զօրավար Սիլիկեանի գործողությունները դադարեցնելու համար արած առաջարկը ստացայ և նրանք իմ կառավարության յայտնելով՝ միաժամանակ իմ ռազմական դրությունը ապահովելու համար Ալեքսանդրապոլը դատարկելով հայկական ուժերի միջև որոշ դիծ յետ քաշելը զօրավար Սիլիկեանին առաջարկած էի։

Ընդունած այս առաջարկը զինադադարի պայման կարծել և իմ կառավարության 8 նոյեմբ. 1920 թ. իմ միջոցով պաշտօնապէս հաղորդած բուն զինադադարի պայմանները որպէս մի նոր զինադադար ընդունել և նկատել, Երևանի կառավարության իրական հաշտության ցանկության մասին մեզ կասկածեցնում է։

Իմ կառավարության մէջ եղած անկեղծությունը դեռ հայկական կառավարության կողմից հաշտություն խնդրելու դիմումից առաջ հաշտություն առաջարկելու փաստով ապացուցում է։ Իմ կառավարության երկու կողմից շահերը ապահովող իրական մի հաշտություն կնքելու վերջնական կերպով որոշում տված լինելով՝ 8 նոյեմբ. 1920 թ. զինադադարի պայմանները առաջարկած է։ Որովհետև այդ պայմանները տրված պայմանաժամի ընթացքում ձեր կառավարության կողմից չեն ընդունվել և գործադրվել և այդպիսով հնարաւորություն չի եղել երկու կողմից պատվիրակներին Ալեքսանդրապոլում հաշտության բանակցությունները սկսելու, ցաւ ի սրտի ռազմական գործողությունների վերսկսելը յայտնելով, հաղորդում եմ յարգանքներս՝

Քեազիմ Կարաբեքիր։

Ի պատասխան այս գրության Հայաստանի կառավարությունը Քեազիմ Կարաբեքիր փաշային ուղարկեց մէկ թուղթ, հետևեալ բովանդակությամբ.

11 նոյեմբ. 1920 թ.

Որին ցաւով իմ կառավարությունը տեղեկացաւ, որ իր անկեղծ ձգտումը — երկու հարևան ժողովուրդների՝ Տաճկաստանի, Հայաստանի միջև յետագայ արիւնհեղության վերջ դնել, որի համար նա ընդունեց և կատարեց սոյն նոյեմ. 6-ին առաջադրած զինադադարի ձեր պայմանները—բոլոր երևոյթին կարելոյն չափ չէ գնահատված ձերդ դերապանցության կողմից։ Իմ կառավարությունը չի կարող չցաւել նաև այն բանի համար, որ ձեր կողմից վերսկսված են ռազմական գործողությունները նախ քան ձեր կառավարությունից մեր վերջին առաջարկի պատասխանի ստացումը։